

Հաշիվ վավերագիր

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Մերիա	[3] Համար
22	Դեկտեմբեր	2022 թ.				Բ	6383103003
[4] Մատուցման ամսաթիվը			Ճշգրտվող հաշիվ վավերագրի			Մերիա	Համար
22	Դեկտեմբեր	2022 թ.					
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ			[6] Համար	
			8 Փետրվար, 2022 թ.			Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳՂ-7-22	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							
Արձանագրություն 15							
[7.1] ՀԳՄ կտրոնի համար							

Շտապություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570064545140100					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Շտապություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

[21] Շտապությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Շտապությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր կամ ծավալային կամ ծավալային քանակը	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	11147122 քրեական վարույթով հայերենից ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	4.5	1000		4500
2	Ժաննա Կարապետյանի դիմումի ֆրանսերեն -հայերեն գրավոր թարգմանություն	էջ	1.5	2379		3568.5
3	Էդգար Ասատրյանի վերաբերյալ փաստաթղթերի ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	11.5	1000		11500
4	173900121000073 քրեական վարույթով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	20.5	1000		20500
5	Հարություն Շեկոյանի վերաբերյալ փաստաթղթերի հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	էջ	5	1600		8000
6	1185922 քրեական վարույթով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	11	1000		11000
7	Իլդար Խաժանի հանձնման միջնորդության վերաբերյալ փաստաթղթերի ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	27	1000		27000
8	Թիվ 136 ստուգման նյութերի ռուսերեն հայերեն գրավոր թարգմանություն	էջ	60	1000		60000

Հաշիվ վավերագիր

9	Նատայա Կորոլկովայի վերաբերյալ 08.12.2022. թիվ ԵԴ/0592/06/22 դատական որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	6.5	1000		6500
10	49108522 քրեական վարույթով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	11.5	1000		11500
11	29122822 քրեական վարույթով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	30	1000		30000
12	27196221 քրեական վարույթով հայերեն-անգլերեն գրավոր թարգմանություն	Էջ	13	1600		20800
13	11103122 քրեական վարույթով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	Էջ	25	1000		25000
Ընդամենը						239868.5

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/12/2022 22:49:36

Ծառայություն
(աշխատանք)
ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

28/12/2022 14:59:10

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թիվ 11147122 քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

23 նոյեմբերի 2022թ.

ք.Երևան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Ռ.Ռ.Բախշյանս, թիվ 11147122 քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, ուսումնասիրելով Շենգավիթ վարչական շրջանի դատախազություն մեղադրական եզրակացությամբ ստացված հիշյալ քրեական վարույթի նյութերը՝ ըստ մեղադրանքի Արթուր Վյաչեսլավի Կոպակի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2022 թվականի հուլիսի 21-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է թիվ 11147122 քրեական վարույթը:

2022 թվականի նոյեմբերի 18-ին Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել են թիվ 11147122 քրեական վարույթի նյութերը:

Քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ մեղադրյալ Արթուր Վյաչեսլավի Կոպակը չի տիրապետում հայերեն լեզվին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ Արթուր Կոպակը չի տիրապետում վարույթի լեզվին՝ հայերենին,

այլ տիրապետում է ուսերեն լեզվին, ուստի թիվ 11147122 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունն Արթուր Կուպակին պետք է հանձնվի ուսերեն լեզվով:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 205-206-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 11147122 քրեական վարույթով թարգմանիչ ներգրավել ուսաց լեզվի մասնագետ Սոֆյա Վազգենի Սերոբյանին /անձնագիր՝ AS0538862/:


Շենգավիթ վարչական շրջանի դատախազության
դատախազ, երրորդ դասի խորհրդական՝

Ռ.Բախչյան



23.11.2022թ.

Ս. Անդրեասյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ**

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ finance@prosecutor.am

10/1-214/1-22

23.11.2022թ.

**«Սոֆյա Սերոբյան Վազգենի» Ա/Ձ
տնօրեն Ս.Սերոբյանին
/ք. Երևան, Տիգրան Մեծի 7/**

Հարգելի՛ տիկին Սերոբյան,

2022թ. նոյեմբերի 23-ին ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչություն մուտք է եղել Լոռու մարզի դատախազության թիվ 62/90887-2022 գրությունը /ի լրումն 21.11.2022թ. թիվ 62/89704-22 գրության/, համաձայն որի անհրաժեշտ է՝ ժաննա Կարապետյանի դիմումը թարգմանել ֆրանսերենից հայերեն:

Խնդրում եմ հանձնարարել համապատասխան որակավորում ստացած թարգմանչին սեղմ ժամկետում թարգմանել դիմումը և ներկայացնել ՀՀ դատախազություն:

**Հարգանքով՝
Ֆինանսատնտեսական
վարչության պետ՝**

Հ. Մարտիրոսյան

Կատ. Ա.Մանուկյան
Հեռ. (010) 511 885

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգման ներգրավելու մասին

‘ 30’ նոյեմբերի 2022թ.

ք.Երևան

Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ռ.Գ.Գրիգորյանս, ուսումնասիրելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/0606/06/20 քրեական գործի շրջանակներում մեղադրյալ Էդգար Ասատրյանի արտահանձնման վերաբերյալ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից ստացված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

28.09.2022թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազություն է ստացվել վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռ.Մինասյանի վարույթում քննված թիվ 10872119 քրեական վարույթի նյութերը և մեղադրական եզրակացությունն՝ ըստ մեղադրանքի Էդգար Ավետիքի Ասատրյանի ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով 2 դրվագահանցագործություններ կատարելու վերաբերյալ, որը 28.09.2022թ. հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ըստ էության քննելու:

Նախնական դատախոսների ժամանակ անհրաժեշտություն է առաջացել ստանալու Էդգար Ասատրյանին ՌԴ իրավապահ մարմինների կողմից ՀՀ արտահանձնելու վերաբերյալ փաստաթղթերը:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ ՌԴ իրավապահ մարմիններից ստացված արտահանձնման վերաբերյալ փաստաթղթերը ռուսերեն լեզվով են և հաշվի առնելով, որ Սոֆյա Սերոբյանը՝ /անձն.ՍՏ0538862, տրված 13.03.2019թ. 006-ի կողմից/ ունի ռուսերեն լեզվի թարգմանչ որակավորում և փորձ, ազատորեն տրապետում է ռուսերեն լեզվին և որ նրա ձեռնահասությունը կասկած չհիարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017թ. մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոմանը, հետևաբար ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ, 27-րդ և 61-րդ հոդվածով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/0606/06/20 քրեական գործով Էդգար Ասատրյանին ՌԴ իրավապահ մարմինների կողմից ՀՀ արտահանձնելու վերաբերյալ փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու համար որպես թարգմանիչ ներգրավել Սոֆյա Սերոբյանին և նրան տեղեկացնել

« քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքների և պարտականությունների մասին :

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ « քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալը կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալը կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝



Ռ.Գ.Գրիգորյան

Ստացա Սույն որոշման օրինակը, « քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի և « քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի քաղվածքները: Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի և նախազգուշացված եմ « քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս.Սեբոսյան

« 30 » Եպտեմբեր 2022թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ**

ՏԾ/Տ - 222 - ՂԸ
30.08.2022թ.

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ finance@prosecutor.am

**«Սոֆյա Սերոբյան Վազգենի» Ա/Ձ
տնօրեն Ս.Սերոբյանին
/ք. Երևան, Տիգրան Մեծի 7/**

Հարգելի՛ տիկին Սերոբյան,

2022թ. նոյեմբերի 30-ին ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչություն մուտք է եղել Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության թիվ 40/40.6/17437-2022 գրությունը, համաձայն որի անհրաժեշտ է՝ թիվ 173900121000073 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և դրան կից հավելվածները թարգմանել հայերենից ռուսերեն:

Խնդրում եմ հանձնարարել համապատասխան որակավորում ստացած թարգմանչին սեղմ ժամկետում թարգմանել փաստաթղթերը և ներկայացնել ՀՀ դատախազություն:

**Հարգանքով՝
Ֆինանսատնտեսական
վարչության պետ՝**

Հ. Մարտիրոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

« 05 » դեկտեմբերի 2022թ.

Վանաձոր քաղաքում

Լոռու մարզի դատախազի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդակալն Ռ.Մինասյանս, քննարկելով ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 55100521 քրեական գործի վարույթը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2021 թվականի փետրվարի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված թիվ 55100521 քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա 2021 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել Հարություն Շեկոյանին նույն հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով որպես մեղադրյալ ներգրավելու մասին այն բանի համար, որ նա՝ 2020 թվականի մարտի 11-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, աշխատելով որպես «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության «Թումանյան» մասնաճյուղի կառավարիչ, 2020 թվականի օգոստոսին, խախտելով Բանկում գործող «Այլ ֆինանսական հաստատություններից վարկեր ներգրավելու նպատակով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության մասնաճյուղերի կառավարիչներին քիզնես-քարտերի տրամադրման/օգտագործման վերաբերյալ գործընթաց»-ի պահանջները, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափի յուրացման եղանակով հափշտակություն կատարելու դիտավորությամբ, օգտվելով իրեն վերապահված լիազորություններից, Բանկի կողմից վարկերի վաճառքի խթանման նպատակով իրեն տրամադրված, նշված բանկին պատկանող «Visa Business» քարտի հաշվից, իրեն վստահված, Բանկում առկա, բանկին պատկանող գումարներից, պաշտոնեական դիրքն օգտագործելով, անձնական նպատակներով ելքագրել և հափշտակել է 4.950.000 ՀՀ դրամ գումար՝ այդ կերպ յուրացնելով ուրիշի առանձնապես խոշոր չափերով հիշյալ գումարը:

Բացի այդ, Հարություն Շեկոյանը, օգտվելով իրեն վերապահված լիազորություններից, խախտելով Բանկում գործող «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության ավտոմատ ինքնասպասարկման մեքենաների տեղադրման, միացման և ինկասացիայի մասին» կարգը, ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, իր կողմից «Visa Business» քարտից ապօրինաբար գումարներ ելքագրած լինելու հանգամանքը թաքցնելու և քարտային հաշվին նշված գումարները վերականգնելու, ինչպես նաև բուքմեյքերական օնլայն հարթակներում խաղադրույքներ կատարելու համար, Թեղուտ գյուղում տեղակայված ATM00063 բանկոմատի դրամապանակներից գաղտնի գումարներ հանելու նպատակով, բանկոմատի լիցքավորման և լիցքաթփման ընթացքում վնասել է բանկոմատի դրամապանակների կնիքները, բանալիով չի փակել բանկոմատի մեխանիկական փականը, այլ միայն փակել է բանկոմատի թվային ծածկագրով փականը և նման եղանակով ձեռք բերելով բանկոմատում առկա դրամական միջոցներին միանձնյա հասանելիություն՝ 2020 թվականի օգոստոսից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-

ն ընկած ժամանակահատվածում ապօրինի մուտք է գործել որպես պահեստարան հանդիսացող ATM00063 բանկոմատ և դրամապանակներից պարբերաբար գաղտնի հափշտակել առանձնապես խոշոր չափերով ընդհանուր՝ 28.955.000 ՀՀ դրամ գումար:

Դեռևս նյութերի նախապատրաստման ընթացքում Հարություն Շեկոյանը դեպքի հանգամանքների վերաբերյալ տվել է բացատրություն և այդ կերպ տեղեկացված եղել իր վերաբերյալ քրեական վարույթ սկսված լինելու մասին, որից հետո վերջինս թաքնվել է քննությունից:

Համաձայն ՀՀ ոստիկանությունից ստացված Հարություն Շեկոյանի վերաբերյալ սահմանահատումների պատմության՝ վերջինս 2021 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 03:07-ին «Հվարթնոց» օդանավակայանից մեկնել է Հայաստանի Հանրապետությունից:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ծանուցագիր է ուղարկվել Հարություն Շեկոյանին՝ 2021 թվականի մարտի 19-ին որպես մեղադրյալ հարցաքննության ներկայանալու համար, սակայն վերջինս բացակայել է բնակության վայրից, իսկ նրա հայրը՝ Սանասար Շեկոյանը հայտարարել է, որ որդին բացակայում է երկրից ու նրա գտնվելու վայրն իրեն հայտնի չէ:

Համաձայն Վանաձոր քաղաքի «Բազում» համատիրության կողմից տրված տեղեկանքի՝ Հարություն Շեկոյանը բացակայում է երկրից ու նրա գտնվելու վայրը հայտնի չէ:

2021 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել Հարություն Շեկոյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:


2022 թվականի նոյեմբերի 9-ին Հարություն Շեկոյանը հայտնաբերվել է Գերմանիայի Դաշնությունում, որտեղից պահանջվել են նրա հանձման մասին փաստաթղթերն անգլերեն թարգմանված լեզվով:

Հաշվի առնելով, որ անգլերեն թարգմանության համար անհրաժեշտ է ներգրավել հայերենից անգլերեն լեզվով թարգմանություն կատարելու համար թարգմանիչ, իսկ սույն պարագայում Մարինե Վազգենի Սերոբյանին ըստ A6 140214 սերիայի դիպլոմի շնորհված է անգլերենի ուսուցչուհու մասնագետի որակավորում, ով ազատորեն տիրապետում է հայերեն և անգլերեն լեզուներին, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և 38-րդ հոդվածների պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 55100521 քրեական գործով մեղադրյալ Հարություն Շեկոյանի հանձման վերաբերյալ փաստաթղթերը հայերենից անգլերեն թարգմանելու նպատակով որպես թարգմանիչ ճանաչել և ներգրավել Մարինե Վազգենի Սերոբյանին՝ նրան պարզաբանելով կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվության մասին:

Լոռու մարզի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական՝



Ռ.Մինասյան

Թարգմանիչ՝ Մարինե Վազգենի Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թիվ 11855922 քրեական վարույթով թարգմանիչ ներգրավելու մասին

15 դեկտեմբերի 2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Հ.Ա.Ղազարյանս, ուսումնասիրելով Շենգավիթ վարչական շրջանի դատախազություն մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 11855922 քրեական վարույթի նյութերը՝ ըստ մեղադրանքի Ալեքսանդր Արայիկի Առաքելյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնում 2022 թվականի մայիսի 27-ին 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 11855922 քրեական գործը:

2022 թվականի նոյեմբերի 29-ին Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել են թիվ 11855922 քրեական վարույթի նյութերը:

Քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ մեղադրյալ Ալեքսանդր Արայիկի Առաքելյանը չի տիրապետում հայերեն լեզվին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ»:

Նկատի ունենալով, որ Ալեքսանդր Առաքելյանը չի տիրապետում վարույթի լեզվին՝


հայերենին. այլ տիրապետում է ուսերեն լեզվին, թիվ 11855922 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունն Ալեքսանդր Առաքելյանին պետք է հանձնվի ուսերեն լեզվով:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ, 205-206-րդ հոդվածներով՝


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 11855922 քրեական վարույթով թարգմանիչ ներդրավել ուսաց լեզվի մասնագետ Առֆյա Վազգենի Սերոբյանին /անձնագիր՝ AS0538862/:

Շենգավիթ վարչական շրջանի դատախազության
դատախազ, երրորդ դասի խորհրդական՝

 Ա. Ղազարյան

Առֆյա Արտուրյան

 15.12.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

09.12.2022թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության սվագ դատախազ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով Իլդար Խաժանի հանձնման միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

07.12.2022թ. ստացվել է Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազության միջնորդությունը՝ Իլդար Խաժանի հանձնման մասին՝ ռուսերեն լեզվով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին, իր ստորագրությամբ հաստատել ապացուցողական կամ վարության այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, վարույթի հանրային և մասնավոր մասնակիցների հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:


Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ վարույթի լեզուն գրական հայերենն է, (...) այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ, ՌԴ գլխավոր դատախազությունից ստացվել է օտարալեզու փաստաթուղթ, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, դեկլարավելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Իլդար Խաժանի հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի ռուսերենից հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին (ՀՀ քաղաքացու անձագիր AS0538862, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված սպացուցողական կամ վարութային այլ գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական
հասնագործակցության վարչության ավագ դատախազ  Ա. Հովհաննիսյան

Ստացա՛ւ սույն սրտչման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Ս. Մերոբյան



«09».....12..... 2022թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅՈՒՆ**

ՑՕ/Բ-226/Բ-22
06.12.2022թ.

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ finance@prosecutor.am


**«Սոֆյա Սերոբյան Վազգենի» Ա/Ձ
տնօրեն Ս.Սերոբյանին
/ք. Երևան, Տիգրան Մեծի 7/**

Հարգելի՛ տիկին Սերոբյան,

2022թ. դեկտեմբերի 06-ին ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչություն մուտք է եղել Շենգավիթ վարչական շրջանի դատախազության թիվ 57/94686-2022 գրությունը, համաձայն որի անհրաժեշտ է թիվ 136 ստուգման նյութերը թարգմանել ռուսերենից հայերեն:

Խնդրում եմ հանձնարարել համապատասխան որակավորում ստացած թարգմանչին սեղմ ժամկետում թարգմանել փաստաթղթերը և ներկայացնել ՀՀ դատախազություն:

**Հարգանքով՝
Ֆինանսատնտեսական
վարչության պետի տեղակալ՝**



Մ. Մեծլումյան

Կատ. Ա. Մանուկյան
Հեռ. (010) 511 885

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

09 դեկտեմբերի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի մեղադրանքով հետախուզվող **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի № ԵԴ/0592/06/22 որոշումը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ձվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 12⁰⁰-ին, «Ձվարթնոց» օդանավակայանի սահմանային գոտուց, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության, Պրիմորսկի երկրամասի Վլադիվաստոկ քաղաքի ՆԳ վարչության Պերվոմայսկի ՆԳ բաժնի միջոցով, այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի արտադրելը, իրացնելը կամ փոխադրելը) մեղադրանքով 2019 թվականի դեկտեմբերի 12-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, բաժին են բերման ենթարկել Դուբայ-Երևան թիվ 2206 չվերթի ուղևոր ՌԴ քաղաքացի **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)**, ում նույն օրը՝ ժամը 14⁰⁰-ին, ձերբակալել են:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ալեքսանյան) 2022 թվականի մայիսի 9-ի № ԵԴ/0523/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հանձնելու համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը

երկարացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ներկայացրած միջնորդությունները Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) 2022 թվականի հունիսի 13-ի, 2022 թվականի օգոստոսի 11-ի և 2022 թվականի հոկտեմբերի 5-ի № ԵԴ/0592/06/22 որոշումները նույնպես բավարարվել է:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2022 թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել բավարարել **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով ՌԴ իրավասու մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը և թույլատրել վերջինիս հանձնումը ՌԴ իրավասու մարմիններին:

Հաշվի առնելով, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12⁰⁰-ին, լրանում է **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** կալանքի տակ պահելու ժամկետը, մինչդեռ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանի կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 25-ի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ ՌԴ իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2022 թվականի դեկտեմբերի 1-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի № ԵԴ/0592/06/22 որոշմամբ բավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում ռուսերեն լեզվով թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** հանձնելու համար կալանավորելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 8-ի № ԵԴ/0592/06/22 որոշման ռուսերեն հաստատված գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ իրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13. 05. 2019թ. , 006-ի կողմից, ՀՀ ԱՆ

տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

**Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական**

Ա. Կոստանդյան

Սրանց սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«09».....12.....2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

12-ը դեկտեմբերի 2022թ.

քաղաք Հրազդան

« Հոտայքի մարզի դատախազության ավագ դատախազ Արծրուն Խաչատրյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 49108522 քրեական վարույթի նյութերն՝ ըստ մեղադրանքի Վլադիմիր Շահենի Չիլինգարյանի՝ « քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

« քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի կարգով թիվ 49108522 քրեական վարույթը, մեղադրական եզրակացությամբ, 2022 թվականի դեկտեմբերի 8-ին ուղարկվել է « Հոտայքի մարզի դատախազություն:

« քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:
2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:
3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:
4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:


Նկատի ունենալով, որ մեղադրյալ Վլադիմիր Շահենի Չիլինգարյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն լեզվին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի մեղադրական եզրակացությունը և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները, ինչպես նաև մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին որոշումը հայերենից ռուսերեն թարգմանելու և նշված փաստաթղթերը մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու համար անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (Անձնագիր՝ AS 0538862, տրված 13.03.2019թ. 006-ի կողմից, « ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.), ով ունի համապատասխան կրթություն, պատշաճ տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, նրա ձեռնհասությունը կասկած չի հարուցում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 61-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 49108522 քրեական վարույթով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS 0538862, տրված 13.03.2019թ.՝ 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.):
2. Սոֆյա Սերոբյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված թարգմանիչ պարտականություններին և իրավունքներին:
3. Սոֆյա Սերոբյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանիչ կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ Կոտայքի մարզի դատախազության
ավագ դատախազ




Արծրուն Խաչատրյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ



Սոֆյա Սերոբյան

« 12 » 12 2022թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱՍՏՈՏԵՒ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

378410, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 7, Հեռ. (0232) 3-25-60

58/1380-22

«16» դեկտեմբերի 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արագածոտնի մարզի դատախազի տեղակալ Գագիկ Հարությունյանս, ուսումնասիրելով թիվ 29122822 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Արթուր Վյաչիսլավի Զաբինի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Թիվ 29122822 քրեական գործով մեղադրական եզրակացությունը կազմվել է 2022 թվականի դեկտեմբերի 15-ին և նույն օրը քրեական վարույթի հետ միասին ստացվել է Արագածոտնի մարզի դատախազություն:

2022 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացվել թիվ 29122822 քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին և նույն օրը վերոնշյալ քրեական վարույթն ուղարկվել է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննելու համար:

Համաձայն քրեական գործի նյութերի՝ մեղադրյալ Արթուր Վյաչիսլավի Զաբինը չի տիրապետում հայերեն գրավոր, բանավոր լեզվին և նախաքննության ընթացքում քննչական և դատավարական գործողություններն իրականացվել են թարգմանչի մասնակցությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:
2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:
3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմինն այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝

1. (...):

2. (...):

3. Վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազն անմիջապես գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: Եթե մեղադրական եզրակացության մեջ կամ դրան կցված հավելվածներում կատարվել են փոփոխություններ, ապա մեղադրական եզրակացությունը կամ դրա հավելվածները ներկայացվում են միայն վերջին խմբագրությամբ՝ դրանց կցելով դատախազի համապատասխան որոշման պատճենը:

Հաշվի առնելով, որ մեղադրյալ Արթուր Վյաչիսլավի Ջաբիևը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի գտնում եմ, որ քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը, դրա հավելվածները և այն հաստատելու մասին որոշումը պետք է ուղարկել թարգմանության՝ հայերեն լեզվից ռուսերեն լեզվով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ և 206-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

«Հ կառավարության սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության հաշվին թիվ 29122822 քրեական գործով նշանակել թարգմանիչ՝ քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը, դրա հավելվածները և այն հաստատելու մասին որոշումը՝ հայերեն լեզվից ռուսերեն լեզվով գրավոր թարգմանություն իրականացնելու նպատակով:

Որոշման կատարումը հանձնարարել Ա/Ձ Սոֆյա Սերոբյան ընկերության թարգմանիչ՝ Սոֆյա Վազգենի Սերոբյանին /անձնագիր AS0538862, տրված 006-ի կողմից/ ում 2019 թվականի դեկտեմբերի 27-ին «Հ ԱՆ կողմից տրվել է ռուսերեն լեզվի թարգմանչի որակավորում:

Արագածոտնի մարզի
դատախազի տեղակալ՝

Գ.Հարությունյան

Քույրճանի Վաչագանյան Սերոբյան

18.12.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ ճանաչելու մասին

«28» դեկտեմբերի 2022թ.

ք. Արտաշատ

Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Գոռ Մանասերյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 27196221 քրեական վարույթի նյութերն ըստ մեղադրանքի Քենոն Արթուրի Գալստյանի՝ արարքին կատարման պահին գործող 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-267.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով /համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին գործողության մեջ դրված ՀՀ քրեական օրենսգրքի 46-399-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին և 44-396-րդ հոդվածի 2-րդ մասին/

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Թիվ 27196221 քրեական վարույթով կազմված մեղադրական եզրակացությունն Արարատի մարզի դատախազությունում ստացվելուց հետո, ստուգմամբ պարզվել է, որ մեղադրյալ Քենոն Արթուր Գալստյանը ոչ բավարար չափով է տիրապետել հայերեն գրավոր լեզվին:

Միևնույն ժամանակ պարզվել է, որ Քենոն Գալստյանը տիրապետում է անգլերեն գրավոր լեզվին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի համաձայն՝

1. Մեղադրական եզրակացությունը հաստատելու կամ այն վերակազմելու դեպքում հսկող դատախազն իր որոշմամբ մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ հանձնում է իրավասու դատարան:

(...)

3. Վարույթի նյութերը դատարան հանձնելու մասին հսկող դատախազն անմիջապես գրավոր տեղեկացնում է վարույթի մասնավոր մասնակիցներին՝ նրանց պատշաճ ձևով ուղարկելով մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված պատճենները: Եթե մեղադրական եզրակացության մեջ կամ դրան կցված հավելվածներում կատարվել են փոփոխություններ, ապա մեղադրական եզրակացությունը կամ դրա հավելվածները ներկայացվում են միայն վերջին խմբագրությամբ՝ դրանց կցելով դատախազի համապատասխան որոշման պատճենը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

(...)

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:

Վերոգրյալների հիման վրա՝ ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ թիվ 27196221 քրեական վարույթով ստացված մեղադրական եզրակացությունը հայերեն լեզվից անգելերն լեզվով թարգմանելու համար որպես թարգմանիչ ճանաչել Մարինե Վազգենի Սերոբյանին /ծնված 05.03.1992թ. անձնագիր՝ AN0470399/:

2. Մարինե Վազգենի Սերոբյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

3. Որոշման մասին հայտնել Մարինե Վազգենի Սերոբյանին:


Մարզի դատախազության ավագ դատախազ՝



Գ.Մանասերյան

Թարգմանիչ՝

28.12.2022թ.



Մ.Սերոբյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

«21» դեկտեմբերի 2022թ.

ք. Երևան

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Դ.Ս.Թադևոսյանս, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում /այսուհետ նաև՝ Քննչական բաժին/ քննված՝ մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան /այսուհետ նաև՝ Դատարան/ հանձնված թիվ 11103122 քրեական վարույթը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

08.01.2021թ. ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում, իսկ այնուհետև բացատրություն է տվել Լարիսա Պետրոսի Սուքիասյանն այն մասին, որ իր եղբայրը՝ Լուսեն Պետրոսի Սուքիասյանը, նույն օրը, ժամը 17-ի սահմաններում, իրեն անհայտ անձի հետ այցելել է իր վերը նշված տան բակ, որտեղ էլ գումարային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ, կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով քաշքշել և ծեծի են ենթարկել իրեն ու վայր գցել, իսկ այնուհետև իր մոտից բացահայտ հափշակել են դրամապանակը, որի մեջ եղել է 43.000 ՀՀ դրամ և բջջային հեռախոսը ու դիմել փախուստի:

2021 թվականի հունվարի 13-ին Քննչական բաժնում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով հարուցվել է թիվ 11153521 քրեական գործը:

2021 թվականի դեկտեմբերի 16-ին Լուսեն Պետրոսի Սուքիասյանին մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերահաստատվել է Դատարանի կողմից:

2022 թվականի հունվարի 26-ին Ստեփան Խինկիանոսի Տեպոյանը 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով ներգրավվել է որպես մեղադրյալ: Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործից մաս անջատելու մասին, որին շնորհվել է 11103122 համարը: Նույն օրը միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ մեղադրյալ Ստեփան Տեպոյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին, որը բավարարվել է դատարանի՝ 27.01.2022թ. թիվ ԵԴ/0054/06/22 որոշմամբ: Վերջինիս հայտնաբերելու համար նրան հայտարարվել է հետախուզում:

2022 թվականի հունվարի 30-ին թիվ 11153521 քրեական գործն, ըստ մեղադրանքի Լուսեն Պետրոսի Սուքիասյանի, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Դատարան:

28.07.2022թ.-ին ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի շրջանի Գելենցիկ քաղաքի ոստիկանությունից ստացվել է տեղեկություն, որ 20.07.2022թ.-ին՝ ժամը մոտ 19:30-ին, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի կողմից հետախուզվող Ստեփան Խինկիանոսի Տեպոյանը Գելենցիկ քաղաքի ոստիկանության ծառայողների կողմից բռնվել և տարվել է ՌԴ ՆԳՆ Գելենցիկ քաղաքի բաժին: Վերջինիս ՀՀ իրավապահ մարմիններին հանձնելու մասին ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարվել է և 2022 թվականի դեկտեմբերի 03-ին՝ ժամը 20:20-ին, «Զվարթնոց» օդանավակայանում Ստեփան Խինկիանոսի Տեպոյանը ձերբակալվել է, բերվել ՀՀ ոստիկանության Շենգավիթ բաժին, ապա ներկայացվել քրեական վարույթն իրականացնող մարմին: Նույն օրը վերջինիս ներկայացվել է մեղադրանքը:

2022 թվականի դեկտեմբերի 05-ին Քննչական բաժնի քննիչ Գ. Խաչատրյանը Ստեփան Տեպոյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան:

Դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 07-ի որոշմամբ Ստեփան Տեպոյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի հարցը վերստին քննարկելու վերաբերյալ քննիչ Գ.Խաչատրյանի միջնորդությունը բավարարվել է մասնակի՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը վերահաստատվել է 1 ամիս ժամկետով՝ կալանքի սկիզբը հաշվելով Ս. Տեպոյանին փաստացի արգելանքի վերցնելու պահից՝ 2022 թվականի դեկտեմբերի 03-ից:

19.12.2022թ.-ին քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է Դատարան. մեղադրական եզրակացության մեկ օրինակ ուղարկվել է նաև մեղադրյալ Տեպոյանին:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Տեպոյանը տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վարույթի լեզուն գրական հայերենն է: Բացառությամբ դատարանի և վարույթի հանրային մասնակիցների, յուրաքանչյուր ոք իրավունք ունի վարույթի ընթացքում հանդես գալու այն լեզվով, որին տիրապետում է:

2. Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ վարույթի լեզվին չտիրապետող մեղադրյալին անհատույց հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնելու սույն օրենսգրքով սահմանված իր բոլոր իրավունքներն այն լեզվով, որին նա տիրապետում է:

3. Վարույթի լեզվին չտիրապետող համապատասխան անձին սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի պատճենները տրվում են նաև այն լեզվով, որին նա տիրապետում է:

4. Վարույթն իրականացնող մարմնին այլ լեզվով ներկայացված փաստաթուղթը վարույթի նյութերին կցվում է թարգմանչի վավերացրած հայերեն թարգմանության հետ:»

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտություն է առաջացել քրեական վարույթով ներգրավել ռուսերեն լեզվի թարգմանչի՝ վարույթով մեղադրական եզրակացությունը հայերենից ռուսերեն թարգմանելու նաատանով:

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածով, 38-րդ հոդվածով, 61-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 11103122 քրեական վարույթով Սոֆյա Վազգենի Սերոբյանին /ծնված՝ 14.01.1989թ.-ին, ՀՀ քաղաքացու՝ AS0538862 սերիա-համարի անձնագիր/ ներգրավել որպես թարգմանիչ:

2. Ս. Սերոբյանին հանձնել որոշման օրինակը՝ պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված՝ թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները՝ միաժամանակ նախազգուշացնելով թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար, համապատասխանաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վարչական շրջանի
դատախազության դատախազ

Դ. Թադևոսյան

Քաղվածք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից

Հոդված 61. Թարգմանիչը, նրա իրավունքները և պարտականությունները

1. Թարգմանիչը վարույթի առարկայով չշահագրգռված այն անձն է, որին վարույթն իրականացնող մարմինը հրավիրում է թարգմանություն կատարելու համար: Թարգմանիչ է նաև համրի նշանները հասկացող և խոսլի հետ նշաններով բացատրվելու ունակ անձը:
2. Թարգմանիչը պետք է պատշաճ տիրապետի վարույթի լեզվին և այն լեզվին, որից կատարվում է թարգմանությունը:
3. Վարույթի այլ մասնակիցներն իրավունք չունեն թարգմանիչ լինելու:
4. Թարգմանիչն իրավունք ունի՝
 - 1) թարգմանությունը ճշգրտելու համար վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ հարցեր տալու թարգմանության ընթացքում ներկա գտնվող անձանց.
 - 2) ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և թարգմանության գրառումների լրիվության և ճշտության հետ կապված կատարել դիտողություններ.
 - 3) յուրաքանչյուր անգամ ստանալու ապացուցողական կամ վարույթային այլ գործողությանը մասնակցելու համար կատարած ծախսերի հատուցում.
 - 4) իրականացնելու սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

5. Թարգմանիչը պարտավոր է՝

1) թարգմանություն կատարելու համար ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.

2) վարույթն իրականացնող մարմնին ներկայացնել իր որակավորումը հաստատող փաստաթղթերը.

3) դատարանի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ընթացքում տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և վարույթին ներգրավված անձանց հետ հարաբերությունների մասին.

4) թարգմանությունն ապահովելու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել ապացուցողական կամ վարույթային այլ գործողության կատարման վայրում, դատական նիստի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

5) թարգմանել լրիվ, ճիշտ և ժամանակին.

6) ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարույթային այլ գործողության արձանագրությունում թարգմանության գրառումների լրիվությունը և ճշտությունը, ինչպես նաև վարույթի հանրային և մասնավոր մասնակիցներին հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը.

7) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին, եթե դրանք չեն վերաբերում թարգմանության բովանդակությանը, ինչպես նաև առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարույթային այլ գործողության, ինչպես նաև դոնիփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

8) ենթարկվել դատական նիստի կարգին:

(61-րդ հոդվածը լրաց. 09.06.22 ՀՕ-241-Ն)

Քաղվածք ՀՀ քրեական օրենսգրքից

Հոդված 503. Ցուցմունք, եզրակացություն կամ կարծիք տալուց կամ թարգմանություն կատարելուց հրաժարվելը

1. Վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց ապօրինի հրաժարվելը, փորձագետի կողմից առանց հարգելի պատճառների եզրակացություն կամ կարծիք տալուց հրաժարվելը կամ թարգմանի կողմից առանց հարգելի պատճառների թարգմանություն կատարելուց հրաժարվելը՝ դրա համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացված լինելու դեպքում՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը տասնապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝


- 1) շահադիտական դրդումներով կամ
- 2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու համար, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Հոդված 504. Սուտ ցուցմունք, կեղծ եզրակացություն կամ կեղծ կարծիք տալը կամ սխալ թարգմանություն կատարելը

1. Քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարչական վարույթով սուտ բացատրություն տալը կամ քրեական, քաղաքացիական կամ վարչական գործով կամ վարույթով սուտ ցուցմունք կամ փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալը կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝ պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝
 - 1) շահադիտական դրդումներով կամ
 - 2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:
3. Սուտ բացատրություն, ցուցմունք կամ կեղծ եզրակացություն կամ կարծիք տված կամ սխալ թարգմանություն կատարած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված պատասխանատվությունից, եթե նա հիմնական գործի մինչդատական վարույթի կամ դատական քննության կամ վարչական վարույթի ընթացքում՝ մինչև վարույթն իրականացնողի կողմից դատավճիռ, վճիռ կամ այլ վերջնական (վարույթը եզրափակող) որոշում կայացնելը, կամովին հայտնել է իր տված սուտ ցուցմունքի, բացատրության, կեղծ եզրակացության կամ կարծիքի կամ սխալ թարգմանության մասին:
4. Սույն հոդվածի իմաստով՝ հիմնական է համարվում քրեական, քաղաքացիական կամ վարչական այն գործը, որի շրջանակներում տրվել է սուտ ցուցմունքը, կեղծ եզրակացությունը կամ կարծիքը, կամ կատարվել է սխալ թարգմանությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները ինձ բացատրվել են, նախազգուշացված եմ թարգմանություն կատարելուց հրաժարվելու և սխալ թարգմանություն կատարելու համար, համապատասխանաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 503-րդ և 504-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ս. Սերոբյան

«21»/12 2022 թ.